

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՆՈՐԻՑ ՇԻՐԱԿԱՑՈՒ «ՔՆՆԻԿՈՆԻ» ՄԱՍԻՆ

Պատմ. գիտ. թեկնածու Ա. Ս. ՄԱԹԵՎՈՅՅԱՆ

«Պատմա-բանասիրական հանդեսի» 1980 թ. 2-րդ համարում պրոֆ. Գ. Բ. Պետրոսյանը հանդես եկավ Անանիա Շիրակացու «Քննիկոնին» նվիրված մեր հոդվածի դեմ¹։ Բանն այն է, որ մինչ այդ, տասնամյակներ շարունակ Անանիա Շիրակացին մաթեմատիկական, տոմարական, աստղաբաշխական և այլ դիտական աշխատությունների հեղինակ էր համարվում, իսկ այժմ նա ներկայացվում է որպես ուսումնական մի ամբողջ համակարգի ստեղծող հայ իրականության մեջ, լուսավորիչ, հեղինակ «Քննիկոն» համայնագիտարանի, որի մեջ մտնում են հիշյալ բնագավառների՝ Շիրակացու անվամբ հայտնի երկերը² լրացված, ամբողջացված և ճշգրտված։ «Քննիկոնի» մեջ տեղ են գտել նաև գործեր, որոնք Շիրակացու գրչին չեն պատկանում։ Այս պայմաններում Անանիա Շիրակացին մի կողմից իր ժողովրդի պատմության առջև կանգնում է լուսավորչի իր վիթխարի հասակով և գիտական աշխարհին տեսանելի է դառնում առավել լիակատար, մյուս կողմից՝ գիտական տարբեր բնագավառների ոչ բոլոր մասնագետներին է հաջողվում հաշտվել տարիների ընթացքում մշակված իրենց համոզմունքի փոփոխման հետ։

Պրոֆ. Գ. Պետրոսյանը չի ընդունում «Քննիկոնի» գոյությունը և առաջարկում է շարունակել նրա բեկորների ուսումնասիրությունը որպես առանձին գիտական բնագավառների մասին գրված ինքնուրույն բնագրեր։ Նույն ժամանակահատվածի էջերում բաղմամբ անգամ կրկնում է. «բացահայտ սխալ է», «այդպիսի վկայություն չկա և չի կարող լինել», «գիտության պատմությանը նման փաստ հայտնի չէ», «նման բան իրականության մեջ գոյություն չունի և չի էլ ունեցել», «արատավոր մեթոդ», և այլն, և այլն։ Ուստի, խիստ համառոտ կանդրադառնանք մեր առաջ քաշած հարցին՝ Անանիա Շիրակացու «Քննիկոնին», ապա՝ դրա դեմ պրոֆ. Գ. Պետրոսյանի գրած հոդվածին։

Մաշտոցի անվան Մատենադարանի հնագույն թղթե ձեռագիրը (№ 2679) քննելիս³, նկատեցինք, որ առաջին 140 էջերի շուրջ քսան միավորները (որոն-

¹ Գ. Բ. Պետրոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 2, էջ 212—220։

² ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 6, էջ 65—76, № 7, էջ 66—78, № 8, էջ 71—81։ «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 2, էջ 163—178։ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1979, № 9, էջ 78—86, 1980, № 1, էջ 89—95։

³ Մաշտոցի անվ. Մատենադարանի № 2679 մատյանը մեզ հասած ձեռագրական եզակի ուշադրան է, թղթե առաջին ձեռագիրը՝ գրված 981 թ. նվրդալուծում և մեզ մոտ, բոլորգրով գրված առաջին հայերեն ձեռագիրը, առաջին ժողովածուն՝ մեզ հասած ինքնագրով և մեծ մասամբ աշխարհիկ բովանդակությամբ։ Իսկ ձեռագիրն ստեղծող Դավիթը, որը նաև որոշ նյութերի խմբագիր-հեղինակն է, հազար տարվա մոռացության մատնված մատենագիր է։

ցից երեքը՝ Անանիա Շիրակացու, մի մասը՝ այլ հեղինակների անուններն են կրում, իսկ մնացածները անհեղինակ են) Ա. Գ. Աբրահամյանը 1944 թ. «Անանիա Շիրակացու մատենագրությունը» միհատորյակում հրատարակել է որպես Շիրակացու երկեր⁴։ Իսկ բանասիրության մեջ դրա դեմ լուրջ առարկություններ և հակառակ ապացույցներ կան։ Մեզ անհրաժեշտ էին հավաստի տեղեկություններ, քանի որ ձեռագիրը պետք է հրատարակվեր ուսումնասիրությամբ և ծանոթագրությամբ, ուստի ձեռնամուխ եղանք Շիրակացու գործերի գոնե մոտավոր ցանկը պարզելու աշխատանքներին։ Դիմեցինք սկզբնաղբյուրներին, Շիրակացուն հիշատակող առաջին պատմիչներին՝ Հովհաննես Դրասխանակերտցուն և Ստեփանոս Ասողիկին, որոնց կրկնում են հետագա բոլոր պատմիչները, երբ գրում են Անաստաս կաթողիկոսի մասին։

Հայոց շարժական տոմարի փոխարեն ուրիշ ազգերի նման անշարժ տոմար ունենալու համար Անաստաս կաթողիկոսը իր մոտ է կանչում Անանիա Շիրակացուն և նրան հանձնարարում այդ գործը։ Շիրակացին, որ հմուտ էր այդ արվեստին, մեծ ջանքերի գնով հորինում է հայոց անշարժ տոմարը։ «Եւ մինչդեռ խորհէր մեծն Անաստաս ժողովօք եպիսկոպոսաց զեղեակսն հաստատել՝ վախճան կենաց նմա ժամանէր, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս վեց։ Անփոյթ զկնի եկելոցն այսմիկ արարեալ՝ և զառաջին մշտախաղաց շրջագայեալ կարգն կոչեալ»⁵։

Անաստասի հաջորդ Իսրայելը, որի մասին Մ. Օրմանյանը նկատում է, թի «անվանեն ավելի բան մը չեն ավանդեր պատմիչները»⁶, ընթացք չի տալիս այդ ձեռնարկությանը և տոմարը չի հաստատում։ Թե ինչու, պատասխանը տալիս է Ասողիկը. որովհետև Անաստասի պատվերը միայն տոմարը չէր և Շիրակացին միայն տոմար չէր ներկայացրել։ Ասողիկը ոչ միայն հայտնում է, որ տոմարը կարգված էր մի մատյանի մեջ, այլև տալիս է մատյանի անունը՝ «Քննիկոն»⁷։ Քանի որ «Քննիկոնի» մեջ հայոց անշարժ տոմարից բացի եղել

⁴ «Անանիա Շիրակացու Մատենագրության» վերջին (1979 թ.) հրատարակության մեջ թղթի ձևագրի 140 էջերից 50 էջերի պարունակությունն է ներկայացված (որի մի մասը դարձյալ վիճելի է) և դուրս է թողնված 90 էջերի նյութը։ Ուրեմն զբաղվելու անհրաժեշտությունը կար։

⁵ Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 92—93։

⁶ Մ. Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 751։

⁷ Ստեփանոս Տարոնացի, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 99։ Պատմության հրատարակիչ Ս. Մալխասյանցը «Քննիկոնի» փոխարեն գրել է «Քրօնիկոն» և ծանոթագրել։ «Զ[եռագրում] աստ և ստորև՝ «Քննիկոն»։ Մատենադարանի Ստեփանոս Ասողիկի «Պատմութիւնը» պարունակող բոլոր ձեռագրերում ամենուր «Քննիկոն» է։ Այդպես է նաև Վենետիկի հնագույն ձեռագրում (տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի)։ Ուրեմն Ստ. Մալխասյանցը տողատակ է իջեցրել բնագրային «Քննիկոն» բառը և փոխարենը մուծել ձեռագրերից ոչ մեկում չհանդիպող «Քրօնիկոնը», որը շփոթության մեջ է գցել շատերին, իսկ այժմ «շփոթում» է որոշ ուսումնասիրողների։ Մենք ճշգրտել, վերականգնել ենք սույն հատվածը ըստ ձեռագրերի (ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 7, էջ 67—68)։ Նկատի առնենք 2. Մարկվարտի դիտողությունը. «Մալխասյանցը «Քննիկոնը» դարձրել է «քրօնիկոն»,— գրում է նա,— բայց Գրիգոր Մագիստրոսը նույնպես ունի «Քննիկոն»։ Կաթողիկոս Պետրոսին ուղղած մի նամակում նա խնդրում է «Քննիկոն» կոչվող գիրքը»։ Մարկվարտն այնուհետև գրում է. «Այստեղից երևում է, որ Անանիայի երկը բոլորովին էլ միայն «քրօնիկոն»—ժամանակագրություն չի պարունակել։ Այդ պատճառով էլ «Քրօնիկոն» վերնագիրը նրան հաղիվ թե համապատասխաներ։ Ինձ թվում է պետք է ընդունել ձեռագրական «Քննիկոն»։

են նաև այլ նյութեր, ուրեմն եպիսկոպոսական ժողովով պետք է հաստատվեր այդ ամբողջը, «ընդեալսն», բայց կաթողիկոսի մահվան պատճառով «Քննիկոնը» չի հաստատվում:

Մեր կարծիքով պատճառը կաթողիկոսի մահը չէր, որովհետև կաթողիկոսի մահը այստեղ չէր նշանակում կաթողիկոսության վախճան: Ինչո՞ւ Անաստասից հետո եկողները անուշադրության մատնեցին համազգային այդ կարևոր ձեռնարկությունը, մի՞թե անշարժ տոմարը Անաստաս Ակոռեցու կարիքների համար էր ստեղծվել: Մինչդեռ ժամանակները շատ նպաստավոր էին, Գրիգոր Մամիկոնյանի իշխանության օրոք (661—685 թթ.) խաղաղության տարիներ էին Հայաստանում: Ուրեմն «Քննիկոնի» շուրջ խորը և լուրջ տարաձայնություններ են եղել՝ կապված նրա բնույթի, պարունակության, նպատակի և այլ հանգամանքների հետ:

Հայ մատենագրության մեջ մի վկայություն է պահպանվել կապված այս իրողության հետ, որը միայն մեկ անգամ է մեկնվել 40 տարի առաջ և դարձյալ մատնվել անուշադրության: Վանական վարդապետի «Յաղագս տարեմտին» երկում, հրատարակված 1941 թ. Մատենադարանի գիտական նյութերի ժողովածուի մեջ, կարդում ենք. «Այլ մեք Աստուծոյ շնորհաւքն զտէրունական եւ զգլխաւոր տանսն սեփական ի գրոց ունիմք... Բայց այս է պատճառն, որ երբ կամեցան առնել համառատ եւ սեփական, եւ մինչդեռ էին ի ջանս, մեռաւ կաթողիկոսն եւ յետ նորա արուեստաւորն, եւ այդ ոչ եղեւ ումէք փոյժ»:⁸ «Այս հատվածում,— գրում է բնագիրը ուսումնասիրող և հրատարակող Լ. Ս. Խաչիկյանը,— հեղինակն ակնարկում է Անաստաս Ակոռեցի կաթողիկոսին (661—667 թթ.), որը... հանձնարարում է Անանիա Շիրակացուն հայկական շարժական տոմարը դարձնել անշարժ... Սակայն կաթողիկոսի և Շիրակացու (արուեստաւորի) մահվամբ խափանվեց տոմարական այդ կարևոր բարեփոխությունը»⁸:

Այսպես, կաթողիկոսից հետո մահացել է նաև Անանիա Շիրակացին, «Քննիկոնի» մասին այլևս հոգացող չի եղել և «մոռացության» են տվել այս կարևոր ձեռնարկությունը:

Ի՞նչ է եղել «Քննիկոնի» պարունակությունը: Այս հարցի պատասխանը տալիս է Գրիգոր Մագիստրոսը, որը ժամանակի կաթողիկոսին հղած նամակում բարձր է գնահատում այդ կոթողային աշխատությունը և հոգում նրա ճակատագրի մասին: Բերում ենք «Քննիկոնին» վերաբերող նամակի այդ հատվածը. «Առ տէր Պետրոս ի ժամանակի խուժան յառնելոյ ի քաղաքին ի վերայ նորա.

կոն» ձևը: Անանիան ստեղծել է մի հիբրիդային բառակազմություն՝ «քննել» բայից և հունական վերջավորությունից: Պետք էր սպասել կամ «Քննական» կամ «Χρηνικον» (Hippolytus Werke, Bd. IV. Die Chronike hergestellt von Adolf Bauer. Nebst einem Beitrag von J. Markwart, Leipzig, 1929, S. 426—427):

⁸ Լ. Խաչիկյան, Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետի ասացեալ, «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», № 1, Երևան, 1941, էջ 165, 169:

⁹ Անաստաս Ակոռեցին քսան տարի եղել է ներսես Տայեցի կաթողիկոսի ատենադպիր, ապա վեց տարի՝ կաթողիկոս: Եթե քառասուն տարեկան հասակում դառնար ատենադպիր, նշանակում է մեռնելիս նա 65—66 տարեկան էր, ուստի մահվան պատճառը չի կարելի «սեպել ծերությունը», ինչպես անում է Մ. Օրմանյանը («Ազգապատմ», էջ 749): Իսկ Շիրակացու՝ ուսումնասիրությանից հայրենիք վերադառնալու յասնամյակը 680 թ. էր լրանալու, կաթողիկոսի մահվան ժամանակ նա շուրջ քառասուն տարեկան պետք է լիներ:

15 Հանդես, № 2

բան մխիթարական և հաբցումն Անանիայի գրոց Շիրակայնոյն, զոր մեծ Քրն-նիկոնն անուանեն:

...Փոխան Յիսուսի, համարձակիմք, միշտ սովորեալ յառատաձիր պարգևս, ղկարեւորսն և ղպիտանացուն յաբատեական բաշխելով քեզ, որ ոչդ երբէք ղանդաղիս ղղիրս Անանիայի Շիրակայնոյ. որ բազում աշխատութեամբ և յածալու խոնջմամբ հաւաքեալ ի բազմազան և յոքնաբեղուն մատենից. յորում և ենթակայացեալ են ոչ միայն քառիցն արհեստք, այլ բոլոր էական խոկմունս. որ են այժմ ի տան տէրունեան, զոր նախքան ղքեզ խրթնացեալ և թագնի ընդ գրուանաւ ծածկէին, զոր և ինքն իսկ, որ մատենագրեաց զայդոսիկ յառաջնում իւրոյ տրամաբանութեան բազում տս յակուսանս և կեղեքականս սակս մերոյ աղգային անփոյթ առնելոյ զայդպիսի գործառնութիւնս. յորում մթերեալ են տոգորք աստուածալին և ենթակայացեալ ամենայն արհեստք մակացութեան և նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեանն, որք են ի տարո-րոջ քանակէ տարակացեալք. իսկ երկրաչափութեանն և աստեղաբաշխութեանն, որք են ի շարունակ քանակէ, և ղկնի այսոցիկ յարամանեալք արհեստք և մա-կացութիւնք մատենագրութիւնք և գրէ ենթէ ամենայն բոլոր վարժումն հռետո-րական, թէպէտ և մասնաւոր ղփոշտեսական զօրէն գործասէր մեղուի ամբա-րեաց ի մեղունոցի այդր ի բազմալէտ մատենագրից Քաղդէացոց և Յունաց և ամենայն աղղաց առ ի ծանօթ լինելոյ, որք նախ քան ղայնոսիկ հաւաքեալն մատեանս, մակացու եղեալ իմաստասիրութեան. քանզի որք ոչ նախուստ կըր-թեալք են, բոլորովին ոչ գոյ հնար թեւակոխել ղայնպիսի աստուածաբանու-թիւնս. քանզի պարտ է նախ ի բնաբանականէն յուսումնականն ամբառնալ և անուուստ աստուածաբանականն...

Եւ սրդ՝ քանզի սակս մատենին Անանիայի եղև յիշատակ իմաստասիրելոյս մեզ, բեր ոչինչ խրթին և անյայտաբար. կամիմք ղհայցուած մեր ծանուցանել մերոյ լուսաւորչիդ. ի բազմաց անփոյթ եղելոյ այսպիսի գործառնութիւնք և հանդէսք, որ ոչ երբէք ի ստաղին վարժելոց գրամարտկոսաց և քերդողաց հնա-ցեալ, ի մոռացումն ալսպիսոյ մատենի ոչ միայն եղև անկանել, այլ և բաղ-մաց, որպէս ի մերոյն Մովսիսէ ուսեալ, գտեալ գտաք, և յայդմ մատենի մա-կագրութեան վերծանեաք: Քանզի Արամեան սերի հպարտութիւն և անամոք բնութիւն և խստապարանոց բարս ոչ ստորակայի յայսոսիկ կրթութիւնս յա-րատեական հաւանել, կամ ենթէ ոչ փոյթ, որք պետականին հասին բախտի, մե-ծարու լինել և խուզել ղխոհեմական արհեստս ի ղարդ քարգոնոսական ապա-բանին, որպէս մեծ Փալումէոսն այն և որք այլք այդպիսիք. և ղի բազում աշ-խատութեամբ խոնջեալ և տագնապեալ, մինչ տակաւին յիմում անտիականն նլով տիս, հաղիւհազ մակացու այսմ եղեալ, սուղ ինչ էական հասեալ, ըստ որումն են յԱրաբացոց և Քաղդէացոց և Յունաց, ոչ ղանդաղեցայ քննութեամբ ղփորձ առնուլ:

Եւ խնդրեմք ի քումմէ լուսափայլութենէդ ղնորագոյնն մատեան շնորհել մեզ, ղի այժմ մերձ առ ծերութիւն հասեալ եմք, և դիւրին վերծանեալ հասցուք ըստ կարողութեան, ղի մի յերկոցունց կողմանցն ունիցիմք մարտակցութիւնս՝ տեսութեան և մտածութեան, քանզի լուսով քո տեսանեմք ղլոյս: Ապա ենթէ ոչ այսոքիկ հաճոյ թուեսցի քումդ աստուածապետական իշխանութեանդ, զոր և կամեսցի, այն իբրև յաստուածուստ պարգև համարեալ է մեզ. ողջ լեր. փո-խան Աստուծոյ¹⁰:

¹⁰ «Գրիգոր Մաղիստրոսի թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, էջ 8—10:

«Քննիկոնի» մասին Մադիստրոսի տեղեկությունները այնքան հստակ, հավաստի և հասկանալի են, որ զարմանալի է, թե ինչպես հայ բանասիրությունը ըստ էության չի անդրադարձել սույն նամակին:

Գր. Մադիստրոսը հանդիմանության խոսքեր է ասում աշխարհիկ և հոգեվոր հայ գործիչների հասցեին, որոնք հասնելով պետական բարձր պաշտոնների՝ անուշադրության են մատնում այդպիսի «գործառնությունը և հանդէսը», այսինքն կրթության, դաստիարակության, պատմական կարևոր մատյանների ստեղծման գործերը, մինչդեռ իրենց ապարանքները կարող էին այդ մատյաններով զարդարել, ինչպես Պտղոմեոս թագավորը և նրա նմանները: Մադիստրոսը նկատում է, որ Մովսես Խորենացին իր ժամանակին նույնպես դժգոհում էր մեր իշխանների այդպիսի բարքերից¹¹, իսկ Շիրակացին «Քննիկոնում» է դժգոհում. «Բազում տարակուսան և կեղեքական սակս մերոյ ազգային անփոյթ առնելոց զայդպիսի գործառնութիւնս»¹²: Հիմա էլ Անանիա Շիրակացու «Քննիկոն» է շատերի կողմից անուշադրության մատնվել, — գրում է Գրիգոր Մադիստրոսը, — և այժմ գտնվում է կաթողիկոսարանում արգելքի տակ: Եվ նա խնդրում է կաթողիկոսին Անանիա Շիրակացու «Քննիկոնի» մասին մտածելուց չզրկարել, որպեսզի այն դառնա աշակերտների սեփականություն, քանի որ հեղինակն այն հավաքել է բազմազան և հարուստ մատյաններից՝ բազում աշխատությամբ և բոլորախույզ հոգածությամբ: Ապա նամակում բերվում է «Քննիկոնի» բովանդակությունը: Քննիկոնը պարունակում է ոչ միայն քառյակ գիտությունները, այլև բոլոր էականների մասին տեղեկություններ, գիտելիքներ: Գր. Մադիստրոսը, ավելի մասնավորելով, ներկայացնում է գրքի բովանդակությունը: «Քննիկոնը» սկսվում է աստվածային գիտելիքներով, որոնց հաջորդում են ուսումնական բոլոր առարկաները այսպիսի դասավորությամբ, թվաբանություն, երաժշտություն, երկրաչափություն, աստղաբաշխություն, արհեստներ և գիտություններ մատենագրության և համարյա հետադարձական ուսումնի ամբողջությունը: Բայց ինչո՞ւ գիտելիքների սույն քանակը՝ այսպիսի համակարգով: Մադիստրոսը տալիս է նաև այս հարցի պատասխանը. որպեսզի սովորողները տեղյակ լինեն իմաստասիրությանը, քանի որ ովքեր նախօրոք չեն տիրապետում այս իմաստասիրությանը, այսինքն բարձրագույն մտածողությանը, աստվածաբանությանը հասնելու հնարավորություն չեն ունենա. «Քանզի պարտ է նախ ի բնաբանականէն յուսումնականն ամբառնալ և անտուտ աստուածաբանականն»: Բայց այս այն է, ինչ Դավիթ Անհաղթն է առաջադրում «Սահմանք իմաստասիրութեան» աշխատության մեջ¹³ և ինչ մենք գտնում ենք Անանիա Շիրակացու «Քննիկոնի» ներածության մեջ:

Գրիգոր Մադիստրոսը ներկայացնում է «Քննիկոնի» բովանդակությունը, գրում նրա՝ որպես գիտությունների շտեմարանի ստեղծման նպատակների մա-

¹¹ Նկատի ունի հետևյալ հատվածը. «Զի եթէ որք յառաջ քան դմեզ և կամ առ մեւք եղեն հարուստք և իշխանք աշխարհիս Հայոց, ոչ ընդ ձեռամբ անկելոց իւրեանց արդեւք գտելոց իմաստնոց զայսպիսեացս հրամայեցին կարգել զյիշատակս բանից, և ոչ արտաքուստ ուստեք այսոցիկ ի ներքս ածել խորհեցան օժանդակութիւնս իմաստից...» («Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 6):

¹² Այսպես կոչված «Ինքնակենսագրութեան» մեջ գրում է. «...Թեպէտ և ոչ որ եղև շնորհակալ և մեծարաւոյ իմոյ աշխատութեան, քանզի և ոչ սիրաւոյ իսկ է ազդ մեր իմաստից և գիտութեանց, այլ ծոյլք են եւ ձանձրացողք» (Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 158—209):

¹³ Դավիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, Երևան, 1960, էջ 126—134:

սին, հայտնում «Քննիկոնի» մի օրինակ ունենալու ցանկություն՝ իր դպրոցում դասավանդելու համար, որպես քերականական և հոեոորական դպրոցների ծրագրերին համապատասխան դասագիրք, որպես «բնաբանականից՝ ուսումնականի միջոցով սուտվածաբանականին անցնելու» ձեռնարկ: Տարիներ անց սանահնեցիներին գրած իբ նամակում Գրիգոր Մագիստրոսը հիշում է Սանահնի դպրոցում սույն գիտությունները դասավանդող և ուսումնասիրող մտավորականներին. «Քննիկոնում» «ենթակայացեալ ամենայն արհեստք մականցութեան» հասկացութեանը հանդիպում ենք այստեղ՝ «բոլոր արհեստից և մականցութեան պարառելուց» ձեռք: Այնուհետև հիշում է «զհայրական ծերոցս ծայրագունից խնամս առ մեզ և խրատ և ողորմութեամբ բարեկարգութիւնս և ղերիտասարդացն, որք ի վարժարանսն հոեոորական և երաժշտական զնոցայն զմտաւ ածեալ հանգէս և զմրցումն և գեղեցիկ մոլութիւնս և մանկացն սաղմոսերգութիւնս քաղցրաձայնութեամբ վերառեցեալ, որ գրէթէ պետութեանցն և բոլորն երկնային դասու և զօրութեանց գերակատար գտեալք և ումանց վանազան և պէսպէս առաքինութեամբ և ճգնութեամբ սքանչելի և զարմանալի երեւեալ, որ և ոչ ի Սկիւթ կամ ի Թեբայիդ այսպիսի երբեմն երեւեալ»¹⁴:

Այս ցույց է տալիս, որ Գրիգոր Մագիստրոսը Պետրոս կաթողիկոսից ստանալով «Քննիկոնի» «զնորագոյնն մատեան»՝ Սանահնի դպրոցում ևս բաց է արել հոեոորական և երաժշտական, ապա նաև բժշկական վարժարաններ, ուր դասավանդել են «Քննիկոնը» և դաստիարակել, խրատել բազմաթիւ երիտասարդներ և մանուկներ, որոնցից շատերը երեւելի մարդիկ են դարձել:

Մագիստրոսի աշակերտներից Բարսեղը և Նղիսեն աշակերտում էին Պետրոս կաթողիկոսին, և վերջինս նրանց հանձնարարում է «Արիստոտելի հաւարմունքը»: Այդ մասին աշակերտները տեղյակ են պահում իրենց առաջին ուսուցչին և Գրիգոր Մագիստրոսը նրանց խորհուրդ է տալիս, թե ինչից պետք է սկսել, ընդհանրապես, ժամանակին համապատասխան կրթություն ստանալու համար¹⁵: «Արդ լուայ... նախ պարտ է զֆերականութիւնն հանդերձ քաղմանութեամբն ուսանել տիրապէս մակստացականութեամբ, և ղկնի այսր զնոեոորականն¹⁶ երիւք հանդիսիւք անսխալ տրոհութեամբ, և ապա զՍանմանցն պարունակել և պղատոնական և արիստոտելական, և դարձեալ պիւրպագրական կարականկերութեանն բացորոշմանց և ղիտողութեանց»: Իսկ նախքան ա՛յս. «Նախուստ քան ղայսոսիկ կրթեցելովք, ներկուս վերձանութեամբ, գէին և զնուկտակաւանս և առասպելաւարժութիւնս ի բազում և ղանազան տեղիս ղեղեալ ղորքանութեամբ արտայայտել հաւանիմք, և ի խոյզ ելանել չերմագոյն և քաջողջական խոհականութեամբ և տրամաբանական հառուածոց հոմեթալան և պղատոնական նախասականին և այլոցն բոլոր արհեստից և մատենից: Զի յամենայն իմաստասէրն խոստովան լիցի ղգիտութիւն և ուրացեալ ղանգիտութիւն, մանաւանդ ըստ կարողութեան քաջիցն արհեստից՝ թուական, երաժշտական, երկրաչափական, աստղաբաշխական»¹⁷:

Այս, հենց, մոտավորապես այն է, ինչ պարունակում էր Շիրակացու «Քննիկոնը», բացառեալ «զէին և զնոր կտակարանս», որը մինչ այդ էլ հայոց ղըպրոցներում դասավանդում էին: Ուրեմն, Մագիստրոսը «Քննիկոնի» պարունա-

¹⁴ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 136—137:

¹⁵ Նույն տեղում, էջ 304:

¹⁶ Բոլոր ընդգծումները մերն են—Ա. Մ.:

¹⁷ Նույն տեղում, էջ 105:

կոթյունը, իր լրացումներով, առաջարկում է դասավանդել Պետրոս Գետադարձի Անիի դպրոցում, այնպես, ինչպես Սանահնի դպրոցում էր իրականացվում:

Անանիա Շիրակացին, համագործակցելով Հայոց հոգևոր առաջնորդի հետ, հստակ ծրագրով ու նպատակով ստեղծել էր հայոց բարձրագույն կրթության դասագիրք «Քննիկոնը», որի նպատակն էր լուսավորել հայրենիքը բնական գիտությունների արմատավորմամբ: Իրավացի է Գ. Խրլոպյանը, երբ գրում է, որ «Շիրակացին փորձում է բավարարել իր ինքնուրույնության համար պայքարող հայ ժողովրդի համար անհրաժեշտ բարձրագույն դպրոց ունենալու պահանջը»¹⁸:

Իսկ այժմ փորձենք պատասխանել Գ. Պետրոսյանի դիտողություններին: «Պատմական աղբյուրների հետազոտությունը ցույց է տալիս,— գրում է Գ. Պետրոսյանը,— որ Շիրակացին կազմում է հայկական անշարժ տոմար... այս տոմարական աշխատությունը հայ մատենագրության մեջ հայտնի է «Քննիկոն» կամ «Քրոնիկոն» անվան տակ»¹⁹:

Շիրակացին իր տոմարը ոչ թե «Քննիկոն» կամ «Քրոնիկոն» է կոչում, այլ պարզապես տոմար: Տասնամյակներ առաջ Ա. Գ. Աբրահամյանը գրել է. «Հայտնության և Զատիկի ճառերը տոմարի մասերն են»: «Աղյուսակից հետո Շիրակացին շարադրել է տոմարը: Այդ երևում է Շիրակացու հետևյալ ակնարկից. «Յայտնութիւն ըստ Հայոց փոփոխմամբ է ըստ շորից ամաց. եւ եթէ զիւրո՞ր գիտելի է, եւ կամ ընդէ՞ր ոչ առկայացեալ ըստ այլոց ազգաց, յիւրում տեղոջ պատմեցից ըստ կարգի տաւմարին»²⁰:

Ինքը՝ պրոֆ. Գ. Պետրոսյանը նույնպես Տոմար է կոչում Շիրակացու Տոմարը: 1979 թ. հրատարակած «Անանիա Շիրակացու մատենագրությունը» ժողովածուի առաջաբանում Ա. Գ. Աբրահամյանը և Գ. Բ. Պետրոսյանը գրում են. «Շիրակացու տոմարական աշխատություններից ամենից կարևորը «Քրոնիկոնն» է, որը պարունակում է 532 տարիների զուգացանկը... Շիրակացու տոմարական մյուս կարևոր աշխատությունը «Պատճեն տոմարին» աշխատությունն է²¹: «Շիրակացու տոմարական բնույթի լավագույն աշխատություններից են նաև ծննդյան և զատիկի տոներին նվիրված բնագրերը» և այլն: Ժողովածուի մեջ տոմարական նյութերը տեղավորված են «Տոմարագիտական աշխատություններ»²², ծանոթագրությունները՝ «Տոմարագիտություն»²³ խորագրերի տակ: Իսկ «Քննիկոն» բառը մերժված է ոչ միայն առաջաբանում ու խորագրերում, այլև ծանոթագրություններում, չեն հիշված նույնիսկ մեր հոգվածների խորագրերը: Նույնիսկ Շիրակացու տոմարական աշխատություններից ամենից կարևորը համարվող «Քրոնիկոնը» գրքում վերնագրված է «Հինգ հարյուր երեսուն երկու տարիների աղյուսակը» և ոչ «Քրոնիկոն»: Հայտնի է, որ քառասուն տարի առաջ Ա. Աբրահամյանը հրատարակեց «Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար» գիրքը (1940 թ.):

¹⁸ Գ. Խրլոպյան, Անանիա Շիրակացու աշխարհայացքը, Երևան, 1965, էջ 35:

¹⁹ «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 2, էջ 212 (այսուհետև այս հոդվածից արված մեջբերումների էջերը կնշվեն տեքստում):

²⁰ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1944, էջ 109 (ընդգծումը պրոֆ. Ա. Աբրահամյանին է—Ա. Մ.):

²¹ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979, էջ 14—15:

²² Նույն տեղում, էջ 127:

²³ Նույն տեղում, էջ 344:

«Քննիկոնն» ու Քրոնիկոնը» նույնացնելու անհաջող փորձից հետո Գ. Պետրոսյանն անցնում է Գրիգոր Մագիստրոսի նամակին, «որովհետև այդ նամակի վերնագրում տեղ է գտել «Մեծ Քննիկոն» անվանումը»։ Իր այդ հոդվածում հայտարարելով, որ «Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում» աշխատության մեջ տոմարական հարցերը քննության չեն ենթարկվել, նույն տոնով շարունակում է, թե այդ գործում «որոշ հարցեր՝ կապված Գրիգոր Մագիստրոսի հետ, իրենց լուսաբանությունը չեն ստացել» (էջ 212, ժան. 1)։ Գ. Պետրոսյանը մոռացել է իր ծառայությունը Մագիստրոսի նամակի լուսաբանման գործում։ Հիշեցնենք. 1959 թ. նա գրում էր. «Գրիգոր Մագիստրոսն էր, որ անհայտությունից լույս աշխարհ հանեց Շիրակացու մաթեմատիկական աշխատությունները, որոնք դարձան հայկական դպրոցներում և ճեմարաններում մաթեմատիկայի դասավանդման հիմք», Մագիստրոսի դպրոցում «...որպես դասադրեր օգտագործվում են... աշխատանքներ»... որոնցից «Մագիստրոսը... բարձր էր գնահատում Անանիա Շիրակացու «Մեծ Քրոնիկոնը», որովհետև այնտեղ, գրում էր նա, «...մթերված են աստվածային հմտությունները և արտահայտված ու տեղավորված են ամեն մի արհեստի տեղեկությունները և նախապատվություն է տրված թվաբանությանը և երաժշտությանը... երկրաչափությանը և աստղաբաշխությանը... և սրանից հետո հարմարված արհեստներն ու գիտությունները և գրեթե ճարտասանական ամբողջ վարժությունը»։ «Այսպիսով, Գրիգոր Մագիստրոսը, լինելով բազմակողմանի կրթված մտածող, կարողացավ ըստ արժանվույն գնահատել Անանիա Շիրակացու գիտական ժառանգությունը»²⁴։

Գ. Պետրոսյանը այնքան համոզված էր, որ Մագիստրոսի սույն նամակում հիշված «Մեծ Քննիկոնը» և Ստեփանոս Ասողիկի «Պատմության» մեջ հիշված «Քրոնիկոնը» նույն դասագրքերն են, որ առանց դույզն ինչ տատանման «Մեծ Քննիկոնը» մկրտում է «Մեծ Քրոնիկոն» անվամբ։ Ինչպես տեսնում ենք, Մագիստրոսի նամակը քսանհինգ տարի առաջ լավ լուսաբանություն է ստացել պրոֆ. Գ. Պետրոսյանի գրչի տակ, հիմա է, որ մթագնում է։

Իսկ վերջին հոդվածում, բերելով Գրիգոր Մագիստրոսի նույն նամակի նույն քաղվածքը, Գ. Պետրոսյանը գրում է. «Գրիգոր Մագիստրոսի նամակի վերնագրում նշված է «Մեծ Քննիկոն»։ Բնագրում «Քննիկոն» բառը չի գործածվում։ Ավելին. նամակում բերված գիտությունների շարքում «Քննիկոնի» մասին ոչ մի հիշատակություն չկա։ Ամբողջ նամակում ոչ մի խոսք չկա Անանիա Շիրակացուն Անաստաս կաթողիկոսի կողմից արված հանձնարարության մասին։ Այս ամենը ցույց է տալիս, որ վերնագիրը հետո է դրված և նրա մեջ ներկայացված «Մեծ Քննիկոնը» ոչ մի առնչություն չունի նամակի հետ. դա հետագայում կատարված հավելում է։ Մագիստրոսն իր նամակին այդպիսի վերնագիր դնել չէր կարող» (էջ 215)։

Հերքենք պրոֆեսորին. ա. «Բնագրում «Քննիկոն» բառը չի գործածվում». ո՞՞հի հարց է. Մագիստրոսը նույն միտքը արտահայտում է տարբեր երանգներով։ Այս նամակի բնագրում Պետրոս կաթողիկոսի անունը չկա, գրված է միայն խորագրում, ինչպես «Քննիկոն» անունը, իսկ բնագրում կաթողիկոսը հի-

²⁴ Գ. Պ. Պետրոսյան, Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Երևան, 1959, էջ 125, 130։

շատակվում է որպես «փոխան Յիսուսի», իսկ «Քննիկոնը»՝ «զգիրս Անանիայի Շիրակայնույ» «մատենին Անանիայի», և պարզապես՝ «մատենան»:

բ. «Նամակում բերված գիտությունների շարքում «Քննիկոնի» մասին ոչ մի նիշատակություն չկա»: «Քննիկոնը» գիտություն չէ, այլ գիտություններ՝ պարունակող դասագրքի անուն: Ուստի այն գիտությունների շարքում լինել չէ՞ր կարող:

Այստեղ զարմանալին այն չէ, որ Գ. Պետրոսյանը գրում է Գ. Պետրոսյանի դեմ, մարդը կարող է իր տեսակետը փոխել կամ մոռանալ (մանավանդ, որ քառորդ դարը քիչ բան չէ), այլ այն, որ Գրիգոր Մագիստրոսին, որին նա համարում էր «Շիրակացուց հետո ամենակարևոր մաթեմատիկոսը», այսօր մեղադրում է հիշողությունը կորցնելու մեջ, որը նամակով Հայոց կաթողիկոսից շատ կարևոր մի գիրք է խնդրել և մոռացել է գրել գրքի անունը: Իսկ գրքի անունը հետո է դրվել, և գիտե՞ք ինչպես՝ «գրչագիրները շխորհանալով հարցի էություն մեջ, ըստ իրենց նախասիրության վերնագիր են դրել և այնտեղ էլ գործ ածել «Քննիկոն» բառը» (էջ 215):

Գրիչներին վերագրել այսպիսի իրավունքներ, որ նրանք «հարցի էության մեջ շխորհանալով» կարող են վերնագրեր հորինել, բառեր մուծել «ըստ իրենց նախասիրության», ճիշտ չէ: Հայ ձեռագրական մշակույթին մոտ կանգնած մարդը պետք է ըստ էության գնահատի հայ մշակույթին անսահմանորեն նըվիրված գրիչներին, որոնք գրի և մատչանի պաշտամունք ունեին, բառին և քանին նայում էին գերագույն երկյուղածությամբ և աշխատում էին սերունդներին հանձնել ճշգրիտ, անսխալ ընդօրինակություն, միշտ ամեղադրություն խնդրելով չգործած մեղքի համար: Ուրիշ բան է սխալվելը կամ ոչ բավարար հմտությունը: Մանավանդ Գրիգոր Մագիստրոսի նամակը բախտի քմահաճույքին հանձնված մի թուղթ չի եղել, որի հետ վարվեին «ըստ նախասիրության և էության մեջ շխորհանալով»: Նախ՝ այն պատկանում է ժամանակի ամենաազդեցիկ հայոց իշխաններից մեկի գրչին, որը շատ մոտ հարաբերության մեջ էր հայ արքունիքի և կաթողիկոսի հետ, իր ժամանակի ամենակրթված անձնավորություններից մեկն էր, իսկ նամակն ուղղված էր Հայոց կաթողիկոսին: Երկրորդ՝ նամակը մեզ է հասել ուրիշ 88 նամակների հետ միասին մի ժողովածուի մեջ՝ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը» վերնագրով: Նամակներից ինը հասցեագրված են Պետրոս կաթողիկոսին: Նամակները, աննշան բացառությամբ, ունեն խորագրեր, որոնք համապատասխանում են բնագրերին: Այդպես է նաև սույն նամակը: Միևնույն մարդու նամակների այսպիսի ժողովածու ունենալը անցյալի հայ իրականության մեջ աներևակայելի գործ կլիներ, եթե նրանք չունենային պատճեններ: Իշխան Գրիգոր Մագիստրոսը, իր իսկ դպրոցի տեսուչը, ուներ իր դիվանը և դիվանագրերը, որը և կրկնօրինակում էր իշխանի դրությունները: Պատճեններն ունենալու սովորությունը հայերի մոտ վաղուց կար: Պատճենավորողը կամ Մագիստրոսի թելադրանքով (ինչպես երևում է խորագրերի ոճից), կամ իր իսկ խմբագրությամբ կարգել է նամակին համապատասխան անոտացիոն վերնագիր: Ահա այդ հավաստի վերնագրերով էլ մեզ են հասել Գրիգոր Մագիստրոսի թղթերը:

Որ սույն նամակի խորագրերը և բովանդակությունը ներդաշնակ են, երեւում է վերոհիշյալ մատենագիրներից առնված վկայությունների և նամակի համեմատությունից.

Հովհաննես Դրասխանակերացի	Ստեփանոս Ասողիկ	Գրիգոր Մագիստրոս
Անաստաս կաթողիկոսի պատվերով Անանիա Շիրակացին գրում է հայոց անշարժ տոմար. Շիրակացու գրածը կաթողիկոսարանում հաստատելու օրերին, մահանում է կաթողիկոսը և անուշադրության են մատնում Շիրակացու գործը:	Անաստաս կաթողիկոսի պատվերով Անանիա Շիրակացին գրում է Քննիկոն, որի մեջ և հայոց անշարժ տոմար. «Քննիկոնը» կաթողիկոսարանում հաստատելու օրերին մեռնում է կաթողիկոսը:	Անանիա Շիրակացին գրել է «Մեծ Քննիկոնը»: «Քննիկոնը» մոռացության է տրվել և արգելված է կաթողիկոսարանում:

Այս ամենը վկայում են, որ Մագիստրոսի նամակի խորագիրը և բովանդակությունը համապատասխանում են իրար և կասկածելը անտեղի է:

Մի պահ վերանանք այս փաստերից ու մտածենք, որ գրիչը «չի խորացել հարցի էություն մեջ»։ Բայց եթե գրիչը էությունը չըմբռներ, ինչպե՞ս կարող էր իմանալ, որ վերնագիրը թերի է։ Ուրեմն հարցի էության մեջ խորացել է և ոչ միայն նկատել է, որ թերի է, այլև իմացել է, որ Շիրակացին այդպիսի գիրք ունի, որի անունն է «Քննիկոն» և ավելացրել է «Քննիկոն» անունը։ Հետևաբար այդ արել է ոչ թե «ըստ իր նախասիրության», ինչպես պրոֆեսորն է կարծում, այլ «էություն մեջ խորանալով»:

«Քննիկոնը» տոմարական աշխատություն է և ուրիշ ոչինչ», — հայտարարում է Գ. Պետրոսյանը առարկություն չվերցնող տոնով և եզրակացնում. «Տոմարը անջատել «Քննիկոնից» սխալ է» (էջ 216):

Այս սխալը վերաբերում է Գ. Պետրոսյանին։ Տոմարը «Քննիկոնից» ինքն է անջատում։ Մենք գտնում ենք, որ տոմարը եղել է «Քննիկոնի» մեջ և ոչ նրանից անջատ, ինչպես Ասողիկն է գրում։ «Ասողիկի տեղեկությունից երևում է, — գրում է Աբրահամյանը, — որ Շիրակացին գրել է մի այլ աշխատություն ևս, ուր ամփոփված է եղել հայոց տոմարը», այսինքն «ՇԼԲ աղյուսակից բացի, որ նա կոչում է «Քննիկոն», Շիրակացին գրել է «մի այլ աշխատություն», այսինքն «Քննիկոնը», ուր ամփոփված է եղել հայոց տոմարը»²⁵։ Բոլորովին ճիշտ է մեկնաբանված Ասողիկի վկայությունը:

Բայց մի ժամանակ այդպես էր մտածում նաև Գ. Պետրոսյանը. «Ստեփանոս Ասողիկը այս մասին հայտնում է հետևյալը, — գրում է նա և զարբարին զուգահեռ բերում է քաղվածքի աշխարհաբարը, — «Անաստասը մտածեց կազմել հայերի համար, ուրիշ ազգերի նմանությամբ, անշարժ տոմար, հրամայեց Անանիա Շիրակացուն կարգել ճիշտալի Քննիկոն, որի մեջ անշարժ հաստատվեւ մեր տոմարը: Անաստասն ուզում էր Քրոնիկոնը հաստատել ժողովով և եպիսկոպոսների կողմից, (սակայն) վախճանվեց»²⁶։ Բառերի ընդգծումը մերն է, չնայած սխալ են դասավորված վերջին չորս բառերը (ոչ թե անշարժ հաստատվեւ մեր տոմարը», այլ «հաստատվեւ մեր անշարժ տոմարը»), բայց ճիշտ է ընկալված միտքը: «Քննիկոնի» մեջ տեղավորված էր հայոց անշարժ տոմարը:

Շարունակենք հետևել Գ. Պետրոսյանի գիտողություններին: «Հայ մտա-

²⁵ Անանիա Շիրակացի, Մատենադրություն, Նրեան, 1944, էջ 105:

²⁶ Գ. Պետրոսյան, Մաթևոսյանի Մաթևոսյանի հին և միջնադարյան Հայաստանում, էջ 48:

վորականների շրջանում սերնդից սերունդ հաղորդվել է, որ Շիրակացին մշակել է անշարժ տոմար, բայց կաթողիկոսի մահվան պատճառով չի հաստատվել» (էջ 215):

Հետաքրքիր է իմանալ, կաթողիկոսի մահը քանի դար է տևել, որ սերնդից սերունդ ցանկացել են և չեն կարողացել հաստատել տոմարը: Անաստասի մահից հետո կարող էր հաջորդ կաթողիկոսներից որևէ մեկը հաստատել իրենց մոտ արգելված «Քննիկոնը» կամ շրջանառության մեջ դնել: Բանն այն էր, որ «Քննիկոնը» տոմարական աշխատություն չէր, այլ կրթական մի ամբողջական համակարգի դասագիրք (որի մեջ նաև տոմարն էր կարգված), որը պետք է հաստատվեր դպրոցների տերերի կողմից, այսինքն՝ հոգևորականների բարձր ժողովի կողմից, որոնք և չկամեցան: Այս խորքի վրա, Անաստաս կաթողիկոսը ժամանակահատվածի ամենալուսավոր կաթողիկոսն էր, որը ոչ միայն հովանավորեց Շիրակացուն գրելու «Քննիկոնը», այլև կամենում էր այն գործածության մեջ դնել, բայց կտրվեց նրա կյանքի թելը և «Քննիկոնը» գործածության մեջ չդրվեց: Այնուհետև ոչ ոք այդ գիտակցությունն ու համարձակությունը չունեցավ մինչև Գրիգոր Մագիստրոսը:

Պատմիչների վկայություններում «ակնարկ անգամ չկա քե Շիրակացին տոմարի հետ միասին ներկայացրել է «Քառյակ արվեստները» և այլ գիտություններ: Այդպիսի վկայություն չկա և չի կարող լինել» (էջ 216):

Հայերեն ձեռագրերում մատյաններ կան, որտեղ տոմարը ներկայացված է «Քառյակ արվեստների» հետ: Այդ Հակոբ Ղրիմեցու «Մեկնութիւն տոմարի» աշխատությունն է, որի սկզբում հեղինակը նախ մեկնում է քառյակ գիտությունները՝ մանրամասնորեն, ապա՝ տոմարը: Ուրեմն, հակառակ Գ. Պետրոսյանի պնդման, ոչ միայն «այդպիսի վկայություն», այլ նույնիսկ ձեռնարկ կա «Լսված չէ, որ թվաբանությունը, երկրաչափությունը, աստղագիտությունը ներկայացվեն եպիսկոպոսների ժողովի հաստատման: Գիտության պատմությանը նման փաստ հայտնի չէ» (էջ 216):

Աղավաղված են մեր մտքերը. եպիսկոպոսների ժողովին պատմիչների վկայությամբ ներկայացվել է «Քննիկոնը», որի մեջ նաև այդ առարկաներն են: Գիտության պատմության մեջ այդպիսի բան կա: «Քննիկոնը» ուսումնական նոր համակարգ էր հայոց հոգևոր դպրոցների համար, և այն պետք է քննվեր և հաստատվեր հոգևոր բարձրագույն մարմնի կողմից:

«Տեսնենք, թե Մաթևոսյանը ինչպես է որոշում իր կողմից հորինված դասագրքի բովանդակությունը» (էջ 216):

«Քննիկոնի» հեղինակը Անանիա Շիրակացին է, իսկ նամակինը՝ Գրիգոր Մագիստրոսը: Պարզապես նամակը մինչև վերջ պետք էր կարդալ և զարմանալու բան չէր լինի: Մեր գործը այն է, որ դասագրքի բովանդակությունը ներկայացնելիս հիմք ենք ընդունել Մագիստրոսի նամակը և Անանիա Շիրակացու պրոֆեսորին հայտնի և անհայտ աշխատությունները:

«Արհեստ» թարգմանված է տոմար, տոմարագիտություն, որ սխալ է (էջ 217):

Հին հայերենում արհեստ = արուեստ, արհեստագէտ = արուեստագէտ²⁷ նույն իմաստն են արտահայտում: Երբ Հովհաննես Դրասխանակերտցին Շիրա-

²⁷ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հատ. Ա, Վենետիկ, 1836, էջ 364:

կացու մասին գրում է. «...որ բանիբուն այնմ արուեստի էր հմուտ»²⁸, նկատի ունի տոմարական արվեստը: Իսկ Կիրակոս Գանձակեցին ուղղակի գրում է Շիրակացու մասին՝ «այլ բանիբուն և հանճարեղ, գիտող յոյժ ամենայն տոմարական արուեստից»²⁹: Ուրեմն տոմարական արվեստ կամ տոմարական արհեստ նույնն է: Եվ Շիրակացին այս տոմարական արվեստը ներկայացրել էր «Քննիկոնում»:

Այսպես կոչված «Ինքնակենսագրության» մասին խնդրում ենք պրոֆեսորին նորից կարգալ մեր հոգվածը: Այն «Քննիկոնի» մասն է և տեղավորված է գործնական թվաբանության սկզբում, ինչպես նշում է Գրիգոր Մագիստրոսը, և ինչպես հանդիպում ենք շատ ձեռագրերում: Այն համարողության արվեստի արժեքավորումն է, Հայաստանում նրա արմատավորելու անհրաժեշտության պատճառաբանումը և իր հակառակորդների ու իրեն զրպադատողների մերկացումը: Այն ավարտվում է այսպես. «Այլ և զայս անմահ թողում ձեզ, վարդապետ. որ յետ իմ գայցէք յաշխարհս ուսումնասիրացդ և փափագողացդ, իմաստից և գիտութեանց»: 1979 թ. աշխարհագր. հրատարակության մեջ այսպես է. «Եվ այս եմ առ հավետ կտակում ձեզ՝ ինձնից հետո աշխարհ եկող ուսուցիչներիդ՝ իմաստություն և գիտություն սովորել ցանկացողներիդ»: Ըստ հրատարակիչների, Անայիա Շիրակացին իրենից հետո եկող ուսուցիչներին կտակում է իր «Ինքնակենսագրությունը», որից իմաստություն և գիտություն պիտի սովորեն: Ի դեպ, մինչև այսօր ամբողջ աշխարհում սովորողները կոչվում էին աշակերտներ, հիմա պարզվում է, որ նրանք ուսուցիչներ են կոչվում:

Ինչո՞ւ է այդպես: Այս մասին խոսել ենք մեր հոգվածում, բայց կրկնենք. ձեռագրերում պատվագրված «վարդապետ» բառը հոգնակիակերտ «ք» տառը չունի, սխալ է «վարդապետը» վերծանությունը: Հայկազյան բառգրքում «վարդապետ» նշանակում է նաև «այն ինչ՝ որ լինի սաղրիչ կամ առիթ որևէ իրաց, որպէս լոկեայն ուսուցիչ, դրդիչ, պատճառ» և բերվում է օրինակ՝ «դաստիարակություն՝ որ առանց աստուածապաշտութեան իցէ, վարդապետ չարեացն լինի»³⁰:

Տեղադրենք բառն իր տեղում. «այլ և զայս ձեզ անմահ ուսուցիչ եմ թողնում՝ ինձնից հետո աշխարհ եկող իմաստություն և գիտություն սովորել ցանկացողներիդ»: Եվ այդ անմահ ուսուցիչը ոչ թե «Ինքնակենսագրությունն» է, այլ՝ «Քննիկոնը», իսկ «Քննիկոն» կամ «քննական» նշանակում է «քննողական, որոնողական, հարցողական, փխրիստփայական, տրամաբանական, բնագնական»³¹: Հիրավի, այս ամենը մենք գտնում ենք «Քննիկոնի» նյութերի մեջ, որից իսկապես կարելի է իմաստություն և գիտություն սովորել: Հենց դրա համար էլ Գրիգոր Մագիստրոսը խնդրում էր կաթողիկոսին, որ մտածի «Քննիկոնի» մասին, որպես իմաստության և գիտության մթերանոցի:

Մեր երրորդ հոգվածին պրոֆեսորն անդրադառնում է «նպատակ ունենալով ցույց տալ այդ աշխատանքը շարադրելու նամար ընտրված առատավոր մեքողը», իսկ այդպիսին է, որ «Քննիկոնի» բովանդակությունը Ա. Մաթևոսյանը բխեցնում է Գրիգոր Մագիստրոսի նամակից» (էջ 218—219):

²⁸ Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս ի ա ն ա կ եր տ ց ի, էջ 92:

²⁹ Կ իր ա կ ո ս Դ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 62:

³⁰ Նոր բառերը Հայկազյան լեզուի, հատ. Բ, էջ 792:

³¹ Նույն տեղում, էջ 1008:

Ուրեմն արատավոր մեթոդ է, երբ պատմաբանը հենվում է պատմական փաստերի վրա և եզրակացությունների հանգում: Եվ որպես ապացույց իր մտքերի շարադրում է, թե ինչպես մենք ձեռագրագիտական, աղբյուրագիտական և բանասիրական ճանապարհով ասլացուցում ենք, որ Նվկլիդեսի «Երկրաչափությունից» մեզ հասած հնագույն հատվածը թարգմանել է Անանիա Շիրակացին, որ այն «Քննիկոնի» երկրաչափության մասն է կաղմել: Վերջում բերում է Մագիստրոսի՝ Սարգիս վարդապետին ուղարկած նամակի այն հանրահայտ մասը, որով հիմնավորում ենք մեր եզրակացությունը և ավարտում՝ «Արդյոք հոգվածագրին ծանոթ է այս»:

Սա արդեն տարօրինակ է:

Մեր հոգվածում քննած քաղվածքը բերում և հարցնում է, թե այն ծանոթ է մեզ: Կամ պրոֆեսորը մոռացել է մեր՝ «Նվկլիդեսի «Տարբերք» Անանիա Շիրակացու «Քննիկոնի» երկրաչափության մաս» հոգվածը, որն ինքը կարդացել է դեռևս 1979 թ. ամռանը «Լրաբերի» խմբագրությունում, մեքենագիր վիճակում, ապա նաև տպագրված (1980 թ. № 1) և կամ այս հատվածը մեկ ուրիշն է գրել, որը չի կարդացել մեր հոգվածը: Երկու դեպքում էլ սա է «արատավոր մեթոդը»:

Մի անգամ էլ անդրադառնանք Սարգիս վարդապետին ուղղված Մագիստրոսի նամակի մեզ հետաքրքրող հատվածին. «...վասն զի ոչ եմք երբեք դադարեալ ի թարգմանութենէ ևս, բազում մատեանս, զոր ոչ եմք գտեալ ի մեր լեզուս՝ զերկուս մատեանսն Պղատոնի, զՏիմէոսի տրամաբանութեանն և զՓեդոլնի, յորս բոլոր ճառսն նախագիտականին այն պարփակեալ կայ, և զայլս բազումս իմաստասիրացն իւրաքանչիւր մատեանքս այս մեծագոյն է քան զտարևոր տօնականս, բայց և գտեալ մեր իսկ ի հայ լեզու գրեալ թարգմանչացն՝ զգիրս Ողմսլիոդորոսի, զոր Դաւիթ յիշատակէ, կարի յոյժ սքանչելի և հրաշալի բանաստեղծութիւնս մակաւասար բոլոր իմաստասիրական բանից. գտեալ եմ և զԿալիմաքոսի և զԱնդոնիկեայն ի հայ լեզու, բայց և զԵրկրաչափականն գեկլիդարին. սկսայ թարգմանել և եթէ տակաւին կամեսցի Տէր երկարանալ մեզ ի կենցաղումս, բազում հոգս յանձին կալեալ զմնացեալսն բոլոր Յունաց և Ասորւոց թարգմանել ոչ դանգաղեցայց»³²: Մագիստրոսն այս նամակում հիշատակում է երկու կարգի մատյաններ.

1. Մատյաններ, որոնք հայերեն թարգմանված չեն. «զորս ոչ եմք գտեալ ի մեր լեզուս»:

2. Մատյաններ, որոնք թարգմանված են հայերեն, և ինքը գտել է (ընդգծված երկերը), իսկ մինչ այդ իրեն անհայտ էին՝ «բայց և գտեալ մեր իսկ...»:

Բնականաբար, Մագիստրոսը թարգմանում էր այն, ինչ հայերեն թարգմանված չէր, և «սկսայ թարգմանելը» դրանց է վերաբերում, այսինքն՝ «զերկուս մատեանս Պղատոնի... և զայլս բազումս իմաստասիրացն...»:

Արդեն հայերենի թարգմանված մատյանները երեք խմբի են բաժանված ըստ թարգմանության ժամանակի և թարգմանիչների. ա. Բայց և գտեալ մեր իսկ ի հայ լեզու գրեալ թարգմանչացն. բ. Գտեալ եմ և... ի հայ լեզու. գ. Բայց և...: Առաջին շարքի մասին ասված է լիարժեք ձևով: Երկրորդը՝ առաջինից տարբերվում է նրանով, որ V դարում չի թարգմանված, իսկ վերջինը նրան հայտնի է Անանիա Շիրակացու «Քննիկոնի» երկրաչափության բաժնից:

³² «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 66:

Համեմատենք կրկնության այս ձևը նախորդ նամակի հետ. ա. «...Անա-
նիայի գրոց Շիրակայնայ, զոր մեծ Քննիկոնն անուանեն». բ. «...Զգիրս Անա-
նիայի Շիրակայնայ...». գ. «...Մատենին Անանիայի...»:

Այս բոլորից հետո մենք կարող ենք նույն հարցով դիմել իրեն՝ պրոֆեսորին. «Արդյոք հոգվածագրին ծանոթ է այս»:

Գ. Պետրոսյանը հոգվածի վերջում անդրադառնում է աշխարհագրության հարցին. «Հայկական աշխարհացույցը» բավական հանգամանորեն ուսումնասիրված պատմական հուշարձան է: Այդ հարցով զբաղվել են անվանի գիտնականներ... Քննության ժամանակ դրսևորվել են տարբեր տեսակետներ: Գիտական հասարակայնության կողմից արդեն հաստատված պիտի համարել, որ այդ աշխատությունը գրվել է VII դարում, նրա հեղինակը հանդիսանում է Անանիա Շիրակացին: Այս բոլորը հոգվածագրին չի բավարարում: Նա ցանկանում է այդ ևս ապացուցել «Քննիկոնով» (էջ 219):

«Տարբեր տեսակետներից» վերջինով «Աշխարհացույցը» համարվում է անհեղինակ, գրված 608—610 թթ.: Անաչառ գիտնականը կնկատեր մեր տեսակետի տարբերությունը: Մենք ցույց ենք տալիս, որ Աշխարհագրությունը գրված է 660—666 թթ. Անանիա Շիրակացու կողմից, որ այն մասն է «Քննիկոնի» երկրաչափության բաժնի, որ այն քարտեզների բացատրություն կամ աշխարհացույց չէ, այլ աշխարհագրություն, որի նպատակն էր պետականությունը և անկախությունը կորցրած հայ ժողովրդին, մասնավորապես զպրոցներում դաստիարակվող հայ պատանիներին ցույց տալ հայրենիքի սահմանները աշխարհի մեջ, ուստի դրա համար ավելի մանրամասնաբար է աշխատել հայրենիքի և հարևան երկրների աշխարհագրության վրա: Աշխարհագրությունը նրա համար է, որ հայ դպրոցականը երկրի և երկնքի հեռավորության հետ միասին իմանա Դվինի և Կարինի, Դվինի և Գանձակի, Դվինի ու Կոստանդնուպոլսի հեռավորությունը: Հնագույն լեզուների շարքում տեանի իր մայրենի լեզուն, դպրություն ունեցող ժողովուրդների մեջ՝ հայրենի դպրությունն ու ժողովրդին³³:

Անանիա Շիրակացու «Աշխարհացույցի» բազմամյա հետազոտող ակադեմիկոս Ս. Երեմյանը գիտնականին վայել ուղղամտությամբ ընդունեց մեր տեսակետը և այդ առթիվ հոգված հրապարակեց³⁴, իսկ մաթեմատիկայի պատմաբանը վերավորված է, որ անվանի գիտնականների տեսակետները հոգվածագրին չեն բավարարել, և որ «նա ամենահնագույն գիտություններից մեկը՝ աշխարհագրությունը, Շիրակացու այլ հայտնի աշխատությունների հետ խումբավորելով՝ մտցնում է մաթեմատիկական գիտության երկրաչափության բաժնի մեջ, իսկ երկրաչափությունը՝ «Քննիկոնի» մեջ» (էջ 220):

Դրա համար պետք է դժգոհել Պլատոնից, Արիստոտելից, Պապոս Ալեքսանդրացուց, Բոեցիոսից, Կասիդորոսից, Դավիթ Անհաղթից և, վերջապես, Շիրակացուց: «Ովքեր են մաթեմատիկայի տեսակների ստեղծողները,— դրում է Դավիթ Անհաղթը,— «Այդ տեսակները հետևյալներն են՝ թվաբանությունը, երաժշտությունը, երկրաչափությունը և աստղաբաշխությունը: Այսինքն այն գիտությունները, որ զբաղվում են քանակի կատեգորիայով և քանակական հա-

³³ Ա. Մաթևոսյան, Անանիա Շիրակացու «Աշխարհագրության» հետ կապված մի քանի հարցեր, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1979, № 9, էջ 83:

³⁴ S. T. Erémian, La reconstitution des cartes de l'Atlas arménien du monde ou ASXARHAC'OYC, „Revue des Etudes Arméniennes“, Paris, 1980, pp. 143—155.

րաբերություններով»³⁵։ Իսկ մաթեմատիկայի մեջ մտնող երկրաչափությունը իր մեջ է առնում եվկլիդեսի երկրաչափությունը, աշխարհագրությունը և երկրաչափական ճարտարապետությունը³⁶։ Այս բանը հաստատում է ինքը՝ Անանիա Շիրակացին. «Յաղագս աշխարհագրութեանց յաստուածային գիրս ոչ ուրեք գտանեմք ոճով ասացեալ, այլ դոյզն ինչ դուն ուրեք, եւ այն դժուարահաս եւ տաժանելի։ Արդ, վասն զի անհասք դոցա եղեալ, մեք հարկաւորիմք յարտաքինս ձեռնարկել, որք զաշխարհագրութիւնս յարմարիցին ի ճանապարհորդութենէ եւ ի նաւարկութենէ եւ ստուգեցին յերկրաչափութենէ»³⁷։ Ուրեմն երկրաչափությունն ու աշխարհագրությունը, այսինքն «գեոմետրիան» ու «գեոգրաֆիան» դեռեւս իրենց սկզբնավորության ժամանակ միասին էին, այդպես էլ նրանք մտել են քառակ գիտությունների կամ մաթեմատիկայի մեջ, հետեւաբար նաև՝ «Քննիկոնի» մեջ։

Գիտությունների պատմության այս հանրահայտ իրողությունը, մեր կարծիքով, ծանոթ պետք է լինի գիտությունների պատմությամբ զբաղվող ամեն մի հետազոտողի։

«Եթե հոգովածագրին հարց տուի. քե բացի «Քննիկոնից» Շիրակացին ինչ աշխատություն ունի, պատասխանը կլինի բացասական, որովհետև բոլոր գիտությունները, ըստ հոգովածագրի, մտնում են «Քննիկոնի» մեջ» (էջ 220)։

Հարց տալը ամեն մի հարցասերի իրավունքն է, պատասխանի իրավունքը նրանն է, ում դիմում են։

«Քննիկոնի» պարունակությունը, «Անանիա Շիրակացու աշխատությունները» և «բոլոր գիտությունները» տարբեր բաներ են։ Շիրակացին իր գիտական աշխատությունների ցանկը շատացնելու մասին չէր հոգում, նա իր երկիրը լուսավորելու համար ստեղծում էր համայնագիտարան և նրանում ամբարում էր այն, ինչ անհրաժեշտ էր «իմաստություն և գիտություն սովորել ցանկացողներին», խտրություն չդնելով, թե ով է շարադրել այդ նյութը և ով է թարգմանել։ Ի տարբերություն մասկանացու վարդապետների, նա իր ժողովրդին թողնում էր «անմահ վարդապետ» և «Քննական» վարդապետ, որ չի քաշվում նույնիսկ Աստվածաշունչը քննադատելուց։ Լսենք նրան. «Բաւանդակեցի զգլորութիւն մերոյ ազգիս Հայաստանեաց, և հմուտ եղեալ աստվածաշունչ գրող... խորհեցայ՝ եթէ ոչինչ յարմարի առանց թուոյ՝ մայր կարծելով ամենայն իմաստից»։ Ուրեմն Աստվածաշունչը, որ միջնադարում համարվում էր բոլոր գիտությունների մայր, չէր բավաւարում Շիրակացուն, և մեծ գիտականը նրան հակադրում է թիվը, որովհետև «ոչինչ յարմարի առանց թուոց», որը մայրն է բոլոր իմաստությունների։ Հին և նոր կտակարանի բոլոր գրքերի տնաքանակները բերելով՝ նա ցույց է տալիս, որ նույնիսկ Աստվածաշունչը ոչ «յարմարի առանց թուոց», որ թիվը մայր է նաև Սուրբ գրքի. և նա կազմում է Սուրբ գրքի տների քանակի ցանկը, դնում գործնական թվաբանության մեջ այսպիսի խորագրերով. «Անանիայի Շիրակայնոյ համարողի Թիւք որչափութեան տանց հին կտակարանաց», «Նորին Թիւք որչափութեանց տանց նոր կտակարանաց»³⁸։

35 Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980, էջ 14—15։

36 Ե. Քասունի, Պատմություն հայ հին դաստիարակության, Բեյրութ, 1959, էջ 114—115։

37 Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 336։

38 ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), № 8, էջ 72։

«Քննիկոնից» բացի Շիրակացին ի՞նչ աշխատություն ունի հարցին հողավածագրի պատասխանը բացասական չէ, ինչպես համոզված պնդում է պրոֆեսորը: Նշել ենք, որ Հայտնության և Զատկի ճառերը չեն մտնում «Քննիկոնի» մեջ, որ դրանք Անաստաս կաթողիկոսի հանձնարարություններից մեկի պատասխանն են³⁹:

Ամփոփենք. «Քննիկոնը» Անանիա Շիրակացու հիմնական աշխատությունն է, հայ բազմադարյան մատենագրության եզակի կոթողներից մեկը, հայ դպրության մեջ բնական գիտությունների հիմնադիր հուշարձանը, որը 667 թ. արգելվեց, բայց Գրիգոր Մագիստրոսը կյանքի կոչեց XI դարի առաջին կեսերին: Օտար նվաճողների տիրապետության պայմաններում հայ ժողովուրդը դարերի ընթացքում իր հոգևոր գանձերից շատ բան կորցրեց, ի թիվս որոց նաև «Քննիկոնի» առանձին գրքեր ու մասեր:

Այսօր վերստին հայտնվեցին ոչ միայն «Քննիկոնի» գոյության գաղափարը, այլև նրա որոշ մասերը, մասունքները և բեկորները, և նրա ամբողջացման աշխատանքը հայագիտության կարևոր խնդիրներից մեկն է:

Անանիա Շիրակացու «Քննիկոնը» պետք է վերականգնել: Այն կհարըստացնի հայ դպրությունը, կբարձրացնի նրա մակարդակը, կճշտվեն մատենագրական-մատենագիտական բազմաթիվ առեղծվածներ, կլուծվեն պատմաբանասիրական շատ հարցեր, կամբողջացվի և կպայծառացվի մեծ գիտնականի լուսավորական գործունեությունը՝ որպես Մաշտոցի գործի մեծ շարունակողի, որի «ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանձարոյ» հիմնադիր նշանաբանը կոնկրետացրեց իր ժամանակին համապատասխան, «ստացիր զիմաստութիւնն, և յաւել արգել զտգիտութիւնն՝ խաւար կոչելով զծնողն» նշանաբանով:

«Քննիկոնը» լրիվ վերստեղծել, հավանաբար, անհնարին կլինի, եթե հրաշքով չգտնվեն նրա առանձին բաժինների համեմատաբար մեծ հատվածներ: «Քննիկոնը» ավերված ճարտարապետական հուշարձան չէ, որի կորած քարը, նույնիսկ խոյակն ու սյուրը կարելի լինի նույնասեռ քարերից պատրաստել և տեղագրել: «Քննիկոնի» մեջ Շիրակացին սեփական ստեղծագործություններից բացի ամբարել էր նաև այլազգի մատենագիրներից առանձին հատվածներ ու երկեր՝ հեղինակների անուններով, որոնցից մի քանիսը այժմ էլ ձեռագրերում պահպանում են իրենց ինքնուրույն գոյությունը և դժվար է հաստատել, որ նրանք երբևէ «Քննիկոնի» մասն են կազմել: Հնարավոր է, որ այդ տեղերը, որպես մատենագրական երկի խոռոչներ, բաց մնան: Սակայն, եթե նույնիսկ հավիտենական լինեն այդ խոռոչները, այնուամենայնիվ պետք է վերականգնել Անանիա Շիրակացու Մեծ «Քննիկոնը»՝ հայ դպրության Զվարթնոցը:

³⁹ Նույն տեղում, էջ 79—88:

ЕЩЕ РАЗ О «КРИТИКОНЕ» АНАНИИ ШИРАКАЦИ

Кандидат историч. наук А. С. МАТЕВОСЯН

(Резюме)

В 662 г. католикос Армении Анастас (661—667) поручил Анании Ширакаци создать неподвижный армянский календарь. Ширакаци создал его и поместил в учебнике, озаглавленном «Критикон», где календарь предшествовал квадривиуму—арифметике, музыке, геометрии и астрономии, и следовал за космологией и другими дисциплинами. Он намеревался преподавать эти предметы в духовных семинариях (в монастырских школах). Однако именно к тому времени, когда церковный собор должен был утвердить применение «Критикона», католикос умер и труд Ширакаци был предан забвению. Немного спустя умер и Ширакаци, а его «Критикон» оставался под запретом в резиденции католикосов до католикоса Петроса (1020—1058). Григор Магистрос попросил у него один экземпляр для преподавания в школе. В одном из своих писем Григор Магистрос изложил содержание «Критикона». Опираясь на его свидетельство, мы имеем теперь возможность постепенно восстановить этот созданный 1300 лет назад армянский учебник по естественным наукам, который 900 лет назад, будучи разделен на части, прекратил свое существование как целое, вследствие чего многое из его содержания исчезло.

Г. Петросян опубликовал статью с необоснованными возражениями против существования «Критикона» («Историко-филологический журнал», 1980, № 2), которые опровергаются в настоящей статье.